

## Կարծիք

Հայցորդ Արա Ազատյանի «Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը հայ պատմագրության մեջ» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը թեխորհրդահայ և թե սփյուռքահայ պատմագրության մեջ ամենաարձարձվածներից է: Հայաստանի խորհրդայնացման հիմնախնդրի վերաբերյալ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում ստեղծված է հուշագրական և պատմագիտական հարուստ գրականություն:

Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ խորհրդահայ պատմագրության մեջ տարածում գտած թեզն այն է, որ Հայաստանի Առաջին Հանրապետության գործիչները, իրենց արևմտահայ դիրքորոշմանը կառչած լինելով՝ չեն գիտակցել դեպի Ռուսաստան կողմնորոշվելու կարևորությունը, և իրենց իշխանությունը պահելու համար, պատճառ են հանդիսացել տարածքային կորուստների:

Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Սփյուռքի պատմագիր-հուշագիր հեղինակների գնահատականը այս հարցում միատարր չի եղել: Դաշնակցական պատմագրությունը համարել է, որ բոլշևիկները առաջնորդվել են համաշխարհային հեղափոխության գաղափարներով և պատրաստ էին «գոհաբերել» Հայաստանը՝ Թուրքիայի միջոցով այդ ծրագիրն իրականացնելու համար: Սփյուռքում գործող ոչ դաշնակցական կամ նախկին դաշնակցական հեղինակների գնահատականները նույնական են խորհրդահայ պատմաբանների տված գնահատականներին՝ Արևմուտքից չհրաժարվելու և խորհրդայնացման խնդրում դեպի Ռուսաստան չկողմնորոշվելու հարցում:

Հայաստանի անկախության հռչակումից հետո նպատավոր պայմաններ են ստեղծվել Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցերին սպառիչ պատասխաններ տալու համար: Կոմունիստական վարչակարգի փլուզումից հետո պատմագիտության ասպարեզ եկած պատմաբան-ուսումնասիրողները արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա փորձել են անցյալում կատարված իրադարձություններին անկողմնակալ գնահատականներ տալ:

Չնայած այն հանգամանքին, որ թե՛ խորհրդային և թե՛ անկախության շրջանում այս հիմնահարցի վերաբերյալ բավական զրվել է, բայց դրա ուսումնասիրությունը և պատմագիտական վերլուծությունը ոչ միայն չի կորցրել իր գիտական նշանակությունը, այլև շարունակում է մնալ արդիական: Ավելին, հայ պատմագրության մեջ հակասական գնահատականների արժանացած Հայաստանի խորհրդայնացման հիմնախնդիրը նորովի արժևորման կարիք ունի:

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ խորհրդային, սփյուռքի և անկախության շրջանի հայ պատմագրության ուսումնասիրությանը և պատմագիտական վերլուծությանը:

Աշխատանքն ունի տրամաբանական կուռկառուցվածք: Այն կազմված է երկու գլխից, համապատասխան ենթագլուխներով, որտեղ ներկայացված են Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ պատմագիտական գնահատականները խորհրդային և անկախության շրջաններում:

Աշխատության ներածական մասում թեմային առնչվող պատմագիտական գրականության հանդեպ ցուցաբերված է քննական վերլուծական մոտեցում: Ատենախոսն անդրադաձել է թեմայի վերաբերյալ խորհրդային, Սփյուռքի և անկախության շրջանի պատմագիտական աշխատություններին. Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ պատմագիտության մեջ առկա թեզերին, ինչպես խորհրդային շրջանի, այնպես էլ Սփյուռքի և անկախության տարիներին պատմագիտական ուսումնասիրություններին:

Առաջին գլխում քննվում է խորհրդայնացման նախօրյակին Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջպետական հարաբերությունների պատմության պատմագրությունը: Առաջին գլխի առաջին բաժնում քննվում են հայ պատմագրության մեջ Հայաստանի խորհրդայնացման սկզբի, իսկ երկրորդ բաժնում՝ Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունների գնահատականները:

Առավել կարևոր է առաջին գլխի առաջին ենթագլուխը, որտեղ ներկայացվում է Հայաստանի խորհրդայնացման սկիզբը համարվող մայիսյան ապստամբության պատմագրությունը, հիմնախնդրի վերաբերյալ հակասական մոտեցումները:



Երկրորդ գլխում քննվում են Հայաստանի Հանրապետության անկման պատմության և 1920 թվականի դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի գնահատականները: Երկրորդ գլխի առաջին բաժնում քննվում է Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման հիմնախնդիրը: Հատկապես արժեքավոր է հայ պատմագրության մեջ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին հասանելիք տարածքների շուրջ ձևավորված կարծիքների քննությունը: Գովելի է, որ ատենախոսը Հայաստանի խորհրդայնացման պատմագրությունը ամբողջացնելու հետ միաժամանակ տվել է սեփական գնահատականները, վերլուծել և իր վերաբերմունքն արտահայտել վերը նշված հիմնախնդիրների վերաբերյալ:

Աստիճանով հանդերձ, կարծում ենք, որ որոշ եզրակացություններ հիմնավորման կարիք ունեն: Ատենախոսությունը, կարծում ենք մեծապես կշահեր, և ատենախոսի եզրակացություններն ավելի հիմնավոր կլինեին, եթե քննվող հարցերը ներկայացվեին Թուրքիայի վարած ցեղասպան քաղաքականության համատեքստում: Այսպես, ասպիրանտի «մայիսյան ապստամբության պատճառը Ադրբեջանի խորհրդայնացումն է» և «հայ բոլշևիկները ապստամբել են սեփական նախաձեռնությամբ» եզրակացություններն ավելի հիմնավոր կլինեին, եթե մատնանշվեր Թուրքիայի դերը Հայաստանի խորհրդայնացման գործում և նրա նպատակները: Ադրբեջանի խորհրդայնացումը մայիսյան ապստամբության պատճառ էր այնքանով, որքանով որ թուրք-ռուսական սպառնալիքը կախվել էր Հայաստանի գլխին: Թեև Խորհրդային Ռուսաստանը 1920 թվականի սկզբից Անդկովկասը խորհրդայնացնելու նպատակ ուներ: Սակայն Անդրկովկասի խորհրդայնացման նախաձեռնողը հանդիսացավ Թուրքիան: Խորհրդայնացման թուրքական այս նախաձեռնությունը նպատակ ուներ մի կողմից խորհրդային զորքերի միջոցով գրավել Ղարաբաղը, և մյուս կողմից՝ իրականացնել Հայաստանի խորհրդայնացումը ռազմական միջոցով, որը նրան հնարավորություն կընձեռեր շարունակել հայոց ցեղասպանությունը: 1920թ ապրիլին Լենինի և Աթաթուրքի համաձայնությամբ խորհրդայնացած Ադրբեջանը մի քանի օրից վերջնագիր է ներկայացնում Ղարաբաղից հայկական զորքերի դուրս բերելու համար: Հայ բոլշևիկները զգալով թուրքական վտանգը փորձում են կանխել այն խորհրդայնացման ճանապարհով: Սակայն Խորհրդային Ռուսաստանը չօժանդակեց



հայ բոլշևիկներին, իսկ հունիսին՝ ոչ առանց թուրքական ազդեցության, խորհրդահայկական անհաջող բանակցությունների արդյունքում թուրքերը ստացան Հայաստանը ռազմական միջոցով խորհրդայնացնելու հնարավորությունը:

Ապստամբության պարտության պատճառների և Հայաստանի խորհրդայնացման հետաձգման խնդրի վերաբերյալ ատենախոսի եզրակացության մեջ նշվում է, որ ապստամբությունը պարտվել էր կազմակերպված չլինելու, սոցիալական հենարան չունենալու և արտաքին օգնություն չստանալու պատճառով, իսկ իշխանությունը բոլշևիկներին չհանձնելու և երկրում խորհրդային կարգեր չհաստատվելու պատճառը եղել է այն, որ ոչ Խորհրդային կառավարության և ոչ էլ հայ բոլշևիկների կողմից որևէ դիմում չի եղել Հայաստանի կառավարությանը իշխանությունը հանձնելու վերաբերյալ: Այնտեղտև ավելացնում է որ Հայաստանի կառավարությունը չէր գնա նման քայլի, քանի որ Արմենկոմը շատ թույլ և անկազմակերպ կառույց էր (էջ 28, 29):

Մակայն ակնհայտ է, որ խոսքը -- չ թե իշխանությունը հանձնելու այլ արտաքին քաղաքականությունը փոխելու մասին է: Այն ինչ Հայաստանի Հանրապետության իշխանություններին, ոչ առանց թուրքական ազդեցության, չհաջողվեց անել 1920 թվականի ամռանը խորհրդահայկական բանակցությունների ընթացքում: Փոխարենը ձևավորվեց քեմալա-բոլշևիկյան դաշինքը: Խորհրդային Ռուսաստանը ձեռնամուխ եղավ Թուրքիայի միջոցով Հայաստանը խորհրդայնացնելու գործին: Թուրքերն օգտագործելով խորհրդայնացման պատրվակը գրավեցին Հայաստանը, ցեղասպանության ենթարկելով Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաթականությանը և արևելահայ բնակչության մի ստվար զանգված: Խորհրդային Ռուսաստանը չմիջամտեց թուրք-հայկական պատերազմին մինչև հայկական զորքերի վերջնական պարտությունը՝ խաղաղ կերպով վերցնելով իշխանությունը դաշնակցականներից դեկտեմբերի 2-ի համաձայնագրով: Իսկ դեկտեմբերի 2-ի գիշերը վերջիններս ստիպված եղան կնքել Ալեքսանդրապոլի ծանր պայմանագիրը, որն այնուհետև գրեթե նույնությամբ ընկավ 1921թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի հիմքում: Հայաստանը խորհրդայնացավ, թուրքերը իրականացրին արևելահայության ցեղասպանությունը և գրավեցի Կարսի մարզը, Սուրմալուի գավառը: Հայաստանից անջատվեց և Ադրբեջանի հովանավորությանը հանձնվեց Նախիջևանը:




Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման մեջ ևս թուրքական գործոնը կար, վերջիններս սպառնում էին պայմանագիրը չկնքելու դեպքում շարժվել առաջ, որը ճիշտ է դեկտեմբերի 2-ի ցերեկը կնքվել էր հայ ռուսական համաձայնագիրը, որով իշխանությունը հանձնվել էր բոլշևիկներին: Մակայն մինչև ռուսական գորքերի տեղ հասնելը թուրքերը շարունակելով իրենց առաջխաղացումը կկոտորեին մնացած բնակչությանը: Ինչ վերաբերում է դեկտեմբերի 2-ի համաձայնագրին, այստեղ ևս թուրքական հետքը երևում է: Նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիմանովի՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայերին հանձնելու վերաբերյալ կեղծ հայտարարությամբ փաստորեն անելանելի վիճակի մեջ էին դնում դաշնակցականներին, զրկելով նրանց հայ բնակչության աջակցությունից:

Թուրքերն օգտագործելով խորհրդայնացման պատրվակը երկար ժամանակ դուրս չէին գալիս Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին անցած Ալեքսանդրապոլի գավառից՝ նպատակ ունենալով նորից վերադառնալ Բաքու: Եվ միայն Ռուսաստանի վերջնագիրն է ստիպում նրանց հեռանալ Ալեքսանդրապոլի գավառից:


Հեղկոմի բռնությունների քաղաքականության վերաբերյալ պատմագիտության մեջ հակադիր կարծիքները ներկայացնելով, ատենախոսը միանշանակ ընդունում է այդ քաղաքականության սխալ լինելը՝ այն համարելով փետրվարյան ապստամբության պատճառը: Կարծում ենք այս հարցում ևս ատենախոսը հաշվի չի առել թուրքական գործոնը: Վերջիններս դրդում էին Հեղկոմին բռնությունների ենթարկել դաշնակցականներին, պնդելով, որ հակառակ դեպքում նրանց միջև տարբերություն չեն տեսնում: Հայ Հեղկոմը, որը կարծում էր կնքվելիք հաշտության պայմանագրի հիմքում կարող է ընկա՞ծ լինել դասակարգային մոտեցումը, ընդունում է թուրքական խայծը: Հայաստանում իրականացված բռնությունները հանգում են իրենց տրամաբանական ավարտին՝ փետրվարյան ապստամբությանը: Մի կողմից «Հայրենիքի փրկության կոմիտեին» առաջարկելով իրենց օգնությունը, մյուս կողմից առանց Խորհրդային Հայաստանի կնքելով խորհրդա-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայամնագիրը բաժանում են Հայաստանը միմյանց միջև: Այսպիսով, ինչպես տեսնում ենք արված դիտողությունները չունեն սկզբունքային նշանակություն և էապես չեն նսեմացնում աշխատության արժանիքները: Կարծում

ենք աստեանախոսին հաջողվել է համակարգված կերպով ներկայացնել Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ պատմագրությունը խորհրդային և անկախության շրջաններում, ինչպես նաև Սփյուռքում: Դրանց շուրջ արված դիտողությունները ունեն ընդհանրական նշանակություն Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ պատմագիտության լուսաբանման տեսակետից:

Ուստի, հիմք ընդունելով վերոհիշյալ արժանիքները, գտնում ենք, որ Արա Ազատյանը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող՝ պ.գ.թ Կարինե Ալեքսանյան 

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող պ.գ.թ Կարինե Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գիտական քարտուղար՝ պ.գ.թ  
Ա. Ակոպով 



05.11.2020